ԼՈՒՍԱՍՏՂ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

LUSASTGH
CHARITY SOCIETY
NON-GOVERNMENTAL
ORGANIZATION

ՀՀ, Վանաձոր, 2001, Գ. Նժդեհի 14, 4-րդ հարկ
Էլ. Հասցե lusastghhk@gmail.com
Հեռ. (+374 93) 310608

2001, G.Nzhdeh str. 14, 4th floor, Vanadzor, RA
E-mail: lusastghhk@gmail.com
Tel: (+374 93) 310608

N:66 **10.09.2026**

ՍՕԱՐ բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն
տիկին Հռիփսիմե Մուրադյանին
Լուսապատճենը
ՍՕԱՐ բարեգործական հիմնադրամի հիմնադիր նախագահ
պարոն Ջորջ Յակուբյանին

Հարգելի տիկին Մուրադյան,

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ձեր ցուցաբերած աջակցության և հոգատար վերաբերմունքի համար՝ Լոռու մարզում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և սոցիալապես խոցելի տարեցների անունից։
Օգոստոս ամսվա ընթացքում Ձեր աջակցության շնորհիվ հնարավորություն է ընձեռվել շարունակել անհրաժեշտ հիգիենիկ պարագաների տրամադրումը այն անձանց և ընտանիքներին, ովքեր դրանց մշտական կարիքն ունեն։ Աջակցությունը բաշխվել է կարիքների գնահատման հիման վրա՝ հաշվի առնելով շահառուների անհատական կարիքները և մոտ մեկ ամսվա օգտագործման պահանջը։
Բաշխումն ըստ թիրախային խմբերի.
Հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվել է ընդհանուր 24 տուփ տակդիր.
6 չափսի՝ 6 տուփ (յուրաքանչյուրում՝ 52 հատ)
S չափսի՝ 8 տուփ (յուրաքանչյուրում՝ 30 հատ)
M չափսի՝ 10 տուփ (յուրաքանչյուրում՝ 30 հատ)
Միայնակ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվել է.
L և XL չափսերի տակդիր՝ 11 տուփ (յուրաքանչյուրում՝ 30 հատ)
Մեծ սավան՝ 3 տուփ (յուրաքանչյուրում՝ 30 հատ)
Միայնակ տարեցներին տրամադրվել է.
L և XL չափսերի տակդիր՝ 10 տուփ (յուրաքանչյուրում՝ 30 հատ)
Մեծ սավան՝ 2 տուփ (յուրաքանչյուրում՝ 30 հատ)
Ընդհանուր առմամբ տրամադրվել է 45 տուփ տակդիր և 5 տուփ մեծ սավան։
Օգնությունից օգտվել են հաշմանդամություն ունեցող երեխաներ և մեծահասակներ, ինչպես նաև միայնակ տարեցներ։ Տրամադրված պարագաները կարևոր աջակցություն են ընտանիքների համար, քանի որ դրանց ձեռքբերումը շատ դեպքերում հանդիսանում է շարունակական և զգալի ֆինանսական ծախս։

Ձեր աջակցությունը հնարավորություն է տալիս ոչ միայն հոգալ շահառուների առաջնային հիգիենիկ կարիքները, այլև թեթևացնել ընտանիքների սոցիալական և ֆինանսական բեռը՝ նպաստելով նրանց ավելի արժանապատիվ և ապահով առօրյայի ապահովմանը:
«Լուսաստղ» ՀԿ-ի և մեր շահառուների անունից ևս մեկ անգամ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը Ձեր մարդասիրական վերաբերմունքի, սոցիալական պատասխանատվության և աջակցության համար:
Շնորհակալ ենք վստահության և համագործակցության համար:
Մաղթում ենք Ձեզ ամենայն բարիք և հաջողություններ Ձեր բոլոր նախաձեռնություններում:
Կցված է նաև գրանցման թերթը:

Հարգանքով՝
«Ադա» կենտրոն
«Լուսաստղ» ՀԿ նախագահ
Անի Գաբրիելյան